

Տուբերկուլյոզ

Հիվանդության բնորոշումը. Տուբերկուլյոզը գյուղատնտեսական և մի շարք վայրի կենդանիների, մուշտակատու գազանների և թռչունների խրոնիկ ընթացքով ինֆեկցիոն հիվանդություն է:

Հարուցիչը. Հայտնի են տուբերկուլյոզի հարուցիչ 3 հիմնական տիպեր՝

1. *M. tuberculosis* (մարդու),
2. *M. bovis* (խոշոր եղջերավոր կենդանիների),
3. *M. avium* (թռչունի):

Հարուցիչը բարձր կայունություն է ցուցաբերում արտաքին միջավայրի քիմիական և ֆիզիկական գործոնների նկատմամբ՝ շնորհիվ իր կառուցվածքի (ճարպամուսային շերտի):

Հարուցիչը կենսունակությունը պահպանում է.

- գոմաղբում՝ 7-12 ամիս,
- հողի մեջ՝ 2 տարի,
- սառեցրած մսում՝ 12 ամիս,
- յուղի մեջ՝ 45 օր,
- պանրի մեջ՝ 100 օր,
- կաթի մեջ՝ 10 օր:

Կաթը համարվում է անվտանգ, եթե 10 րոպե տևողությամբ տաքացվում է 70°C-ի պայմաններում կամ եռացվում՝ 3-5 րոպե տևողությամբ: Եթե հիվանդ կենդանուց ստացված կաթը առանց եռացնելու արդեն վերամշակվել է յուղի կամ պանրի, ապա կարող էք այն օգտագործել վերը նշված ժամկետից հետո (երբ միկրոբը կոչնչանա) կամ մթերքը պետք է ոչնչացնել:

Հիվանդության հարուցիչ աղբյուրից մանրէներն արտազատվում են.

- կաթով,
- քթի լորձահոսքով, խորխով,
- կղկղանքի միջոցով,
- մեզը նույնպես պարունակում է տուբերկուլյոզի ցուպիկներ, եթե ախտահարված են միզային ուղիները, արգանդը, մակամորձին:

Հիվանդության տարածման ուղիները. Կենդանիների վարակումը կատարվում է.

- ներքին ճանապարհով (կերի կամ ջրի միջոցով),
- ինչպես նաև աներոզեն (օդակաթիլային): Օդը մանրէներով վարակվում է ոչ միայն հազի միջոցով, այլ նաև հատակից բարձրացող փոշու:

Տուբերկուլյոզը կարող է նաև կենդանուց փոխանցվել մարդուն (տես աղյուսակ 3):
--

Կլինիկական նշանները. Հիվանդության գաղտնի շրջանը տևում է 14-40 օր: Սովորաբար հիվանդ կենդանիների մեծամասնությունը արտաքինից չի տարբերվում առողջներից: Նրանք հայտնաբերվում են միայն.

- ալերգիական ախտորոշման ընթացքում (իրականացվում է տարին 2 անգամ պետպատվերի շրջանակներում),
- ախտաբանա-անատոմիական փոփոխությունների հիման վրա (սպանդից հետո):

Սովորաբար ախտահարվում են կենդանու թոքերն ու աղիները: Հետևաբար ի հայտ կգան դրանց համապատասխան կլինիկական նշաններ:

Տարբերում են տուբերկուլյոզի փակ և բաց ձևերը: Բացի դեպքում միկոբակտերիաները արտաքին միջավայր են արտազատվում բրոնխային լորձի, կաթի, կղկղանքի միջոցով, իսկ փակի դեպքում վարակի տարածում հնարավոր չէ: Հիվանդությունը զարգանում է դանդաղորեն: Այսինքն՝ ձեր ֆերմայում կարող է լինել տուբերկուլյոզով հիվանդ կենդանի, բայց ակնհայտ կլինիկական նշանների բացակայության հետևանքով անգամ չկասկածեք դրա մասին:

Հետևաբար շատ կարևոր է.

- առնավազն տարին երկու անգամ իրականացել տուբերկուլյոզի ախտորոշում,
- պահպանել սննդամթերքի օգտագործման անվտանգության կանոնները:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները. ՀՀ-ում տուբերկուլյոզի կանխարգելման նպատակով, ինչպես արդեն նշվել է, պետպատվերի շրջանակներում իրականացվում են կենդանիների համակարգված ախտորոշիչ հետազոտություններ:

Բուժումը անարդյունավետ է: